

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1937 Փետրուար-Մայիս Թի. 2-5

Հայկական հեմարան - Բանասիրական	42
Հ. Եղիա փեյիկեան. — Մարտիրոս Եպիսկոպոսի Երզնկացոյ՝ Ուղեորութիւնի Սղանիա	49
Արտաշաղ Բրքեպ. — Պատմութիւն Հալէպի քահանայից (շար.)	61
Գեորգ Արքեպ. Արարանեան. — Պատառիկներ լուսածիր շաբաթացեալ վանքերէն Մեսրոպ 3. Սերեան. — Հայերն իբր քաղաքական ոտից կայան Հնդկաստանի մէջ - Խօջայ Իսրայէլ Սարհադ (թրգ. Հ. Փ. Ե.)	65
Լեզուագիտական	
Վահան Շահպադ. — Մեր գրական լեզուն	74
Գրական	
*** — Բանայանգ և բանակարգի փառքեան Պարոնն (1837).	
Հ. Վահան Յովհաննէսեան. — Հայկական գիւղը-Սուրբիկին - Քեզի	77 - 79
Պ. Վ. Պզտիկեան. — Կը լո՛ւ գաշնակն	79
Հրաչ Գալարեան. — Բարիկ - Միլան	80
Ֆերապ. — Իրիկնային	81
Հ. Եղիա փեյիկեան. — Մայր Ելպիս Կապրաշեանի կեանքն ու գործը	118
Մայր Ելպիս Կապրաշեան. — Գերագոյն սիոփանքս - Մենաստանին կոյսը - Սոխակին երգը - Իզն իմ առ Մարիամ Կոյս - Ս. Դաստատակին - Սիմոնիկ և իր պապը - Առ Մայիս - Խոնջ թռչնակը. 121 - 125	
Օրուան գրքեր-Գրախօսական	
Հ. Ղեռնդ Տաշեան. — Երաժշտական հրաշապարկութեան մը ասթիւ	102
Յարութիւն Քիւրտեան. — The Travels of Macarius. Թրգմ. և հրատ. The Oriental Translation Fund-ի համար էն. — The Four Gospels of Karahissar, by E. Cadmin Colwell Harold Rideaout Willoughby	104
Հ. Եղիա փեյիկեան. — Ուղեգ. Ա. Արեւդեանի «Neuarmenische Grammatik Ost- und Westarmenisch» (Աշխարհաբար քեր. Արեւելահայ և Արեւմտահայ բարբառով)	107
Բրոք. Ա. Մանդիկ. — (Գրախօսութիւն Ա. Արեւդեանի վերին գրքին)	111

Շարք տես Գ. էջ

SOMMAIRE

1937 Février-Mai N. 2-5

Académie Arménienne - Philologie	P.
P. E. Paitchikian. — Voyage en Espagne de Mardiros évêque d'Erzinga (1489-1492)	49
Mgr. Ardavast Surmèyan. — Histoire des prêtres d'Alep	61
Mgr. K. Arslanian. — Mémoires des couvents arméniens	65
Mesrob J. Seth. — Armenians as political Stepping-Stones in India - Khojah Israel Sarhad	68
Linguistique	
Vahan Chahbaz. — Notre langue littéraire	74
Littérature	
*** — A. Mr. Papazian (poésie de l'année 1837)	
P. Vahan Hovhannessian. — Le village Arménien - A ma petite nièce Sourpik - A toi (à ma nièce Sandoukht). 77 - 79	
Abbé P. Bezdikian. — Le piano tait. 79	
Hratch Katcharentz. — Paris-Milan. 80	
Férab. — La poésie du soir.	81
P. E. Paitchikian. — † Mère Elbis Gabrachian (Sa vie et son œuvre poétique). 118	
Mère E. Gabrachian. — Ma suprême consolation - La vierge du cloître - Le chant du rossignol - Mon désir à la S.te Vierge - Au St. Suaire - Simonik et son grand père - Au mois de Mai - L'oiseau fatigué.	121 - 125
Les livres du jour-Recensions	
P. Léonce Dayan. — A l'occasion d'une publication musicale	102
H. Kurdian. — The Travels of Macarius, etc. - The four Gospels of Karahissar, by E. Cad. Col. H. R. W.	104
P. E. Paitchikian. — Neuarmenische Grammatik Ost-und Westarmenisch (par Dr. Artasches Abeghian)	107
Prof. A. Zanolli. — Neuarmenische Grammatik etc. (ut supra)	111

Voir la suite, page 3.

ԲԱՋՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՓԵՏՐՈՒԱՐ-ՄԱՅԻՍ ԹԻԻ 2-5

ՀԱՏ. ՂԵ ՌՅԶԶ-ՌՅԶԵ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՐԶՆԿԱՑԻՈՅ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ Ի ՍՊԱՆԻԱ

ՏԱՐԻՈՎ առաջ մեր ուշադրութեան տալիս եղած էր «Բազմավէպ»ի ընթերցողներուն ներկայացնել սոյն ուղեգրութիւնը, և երբ ծագեցաւ Սպանիական պատերազմը՝ կարծեմ շարժառիթ մ'ալ աւելցաւ անոր իրազորութեան, քանի որ, ինչքան ցաւալի, սակայն հետաքրքրական է տեսնել մեր հայ ուղեգիրը որ իտալ-քան ցաւալի, սակայն հետաքրքրական է տեսնել մեր հայ ուղեգիրը որ իտալ-գուլից - զաղղիական աշխարհներէն վերջ կ'անցնի Սպանիա և հիւսիսէն սկսեալ մինչեւ արեւմուտք և հարաւ և ապա արեւելեան մասը՝ կ'այցելէ այն զլխաւոր քաղաքները արեւմուտք և հարաւ և ապա արեւելեան մասը՝ կ'այցելէ այն զլխաւոր քաղաքները որոնք հետզհետէ կ'արձեն մեր աչքին առջեւ ռազմադաշտի վերածուելով հուրի և սուրի բովէ մը անցելու վրայ են ներքին քաղաքական տխուր և եղբայրասպան պատերազմին հետեանքով:

Մարտիրոս եպ.ի այս ուղեգրութիւնը թէեւ հրատ. և թարգմանուած Սէն Մարթէնէ, բայց անծանօթ և անմերձեանալի մեր ընթերցողներուն՝ կը բռնէ 431-438 էջերը թէնէ, բայց անծանօթ և անմերձեանալի մեր ընթերցողներուն՝ կը բռնէ 431-438 էջերը վանքիս զրչագիր ԼԳ ՃԱՌԸՆՏՐԻՆ, զոր նկարագրած է մանրամասնօրէն Հ. Բ. Մարթէնեան¹. մենք կը բաւականանանք հոս ամփոփել զլխաւոր կէտերը:

Զեռագիրը կը կրէ վանքիս մատենադարանին Գ. զ. 812 թիւը. ԹՈՒՂԹՔ՝ 236. ՄԵՆ՝ 32X21. ԳՐ. միասին, շեղագիր. ՏՈՂՔ՝ 33. ՆԻՒԹ՝ թուղթ. կաշեկազմ, լաւ պահուած. ԺԱՄԱՆԱԿ ընդօրինակութեան՝ 1857 (ինչպէս կ'երեւի 431 էջին լուպահուած. ԺԱՄԱՆԱԿ ընդօրինակութեան սկիզբը). ԽՈՐԱԳԻՐՔ՝ սեւագիր. առանց ԶԱՐԴԱՆԿԱՐԻ. սանցքին վրայ՝ Ուղեգրութեան սկիզբը). Սուրբապ Պարոնեան և Մուրատեան վարժարանի մեր ԳՐԻԶ ընդօրինակութեան՝ Հ. Սուրբապ Պարոնեան և Մուրատեան վարժարանի մեր աշակերտները. ՏՆՂԻ՝ Փարիզ: Ընդօրինակուած է ընտրանքով՝ Փարիզու Ազգ. մաշակերտները. ՏՆՂԻ՝ Փարիզ: Ընդօրինակուած է ընտրանքով՝ Փարիզու Ազգ. մաշակերտները.

1. ՏՆՂԻ «Մայր ցուցակ Հայ. Զեռագրաց» հատ. Բ. էջ 499-511 տպ. Վենետիկ Ս. Ղազար, 1914-1917.
ԲԱՋՄԱՎԷՊ ՓԵՏՐ. - ՄԱՅԻՍ 1937

տենադարանի թիւ 45, 47, 65 և այլ երկաթագիր, բոլորգիր և մաս մ'ալ նոտրա-
գիր ձեռագիրներէ (որոնք կարգաւ ՈԽԳ, ՉԳԳ, ԹՃԼԸ, ՌՃՂԶ տարիներուն են, այսինքն
1194, 1334, 1489, 1727) զորս ԼԲ Ճառքնորի օրինակողները զանց ըրած էին:
Վանքիս հաւաքածոյին մէջ մտած է 1858-1860 ին: Ինչպէս կ'ըսէ Հ. Բ. Սարգի-
սեան՝ այս նոր Ճառքնորը կը պարունակէ 27-30 ներդրեաններ, վկայարանու-
թիւններ, պատմական զրուածներ, թուղթեր, կանոններ, տեսիլներ, ուղեգրութիւններ,
վիճակագրութիւններ՝ որոնց մասին չենք կրնար հոս խօսիլ:

Մարտիրոս եպս.ի Ուղեգրութիւնը թէ և չի կրնար բաղդատուիլ Սիմէոն լեհացի
դպրի ուղեգրութեան¹ հետ, սակայն զուրկ չէ շահեկանութենէ զանազան տեսակէտ-
ներով, և մանաւանդ այժմէականութեամբ. թէ և Հ. Բ. Սարգիսեան և Հ. Ն. Ակի-
նեան իրենց յիշատակութեան մէջ անկատ կը թողուն Սպանիական մասը:

Մարտիրոս եպս.ի քով կը պակսի գրական — պատմական ոճն և լեզուական
մաքրութիւնը. ինչ որ սակայն նկատելի է իր պարզ ու անսեթեւեթ ձեւին մէջ՝ ան-
կեղծութիւնն է, իր կրօնական ըմբռնումը, իր բարեպաշտ ուխտաւորի հաւատքը²,
որ անշուշտ թանկագին ժառանգութիւնն է մեր Հայրերուն, ընդհանուր Եկեղեցւոյ
հետ հաւատքի և սիրոյ միութեան գեղեցիկ զրոյմով:

Կրօնականէն զատ Մարտիրոս եպս.ի Ուղեգրութեան մէջ հետաքրքրական են
իր աւանդած հատուկորդ զանազան հակիրճ տեղեկութիւնները բարքերու և տեղերու
մասին՝ թէ և յետիններու կարգին ունենայ անուններու հին և երբեմն աղաւաղ ձեւեր:

Մարտիրոս եպս. Երզնկացիէն առաջ բուն Սպանիա զացող ուխտաւորներ Ս.
Յակոբի գերեզմանին՝ եթէ ոչ ամէնէն հին, սակայն հնագոյն ժամանակներէ կը յիշ-
ուին Բագրատունեաց իշխանութեան օրով՝ նախ Ս. Սիմէոն³ սքանչելագործ հայկազն,
ազնուական սերունդէ, ժամանակակից Ս. Գրիգոր Նարեկացւոյն, ինչպէս կը վկայեն
նոյն Ս. Սիմէոնի օրով ապրած և կենսագիր Բենեդիկտեան կրօնաւոր մը — որու
գործը հրատարակած են Բուլանդեանը⁴ ընդարձակ տեղեկութիւններով, — Պարոնիոս⁵,

1. «Հանդէս Ամսօրեայ» ի 1932-1933-1934-1935 տարիներու ընթացքին երեւցած:

2. Հայ դէմքեր որոնք ուխտական պանդխտութեամբ կամ գերեզմաններու ուրիշ շարժումներով հեռացած են
Հայ աշխարհէն և թափառած օտարութեան մէջ՝ Երուսաղէմի Տնօրինական սուրբ տեղերը, կամ զԼաւոր Առա-
քեալներու գերեզմաններն ի Հռոմ և հուսկ Քրիստոսի թաղման վայրի Ս. Յակոբեան ուխտաւորն ի Սպանիա՝ ընչ չեն
որ կ'երեւին զիստուր աստղերու նման, սկսեալ հին դարերէն. ինչպէս Կիւրիզ և Հիպերիբա ամուսնուներն ի
Հռոմ 385 թուին (տես Բզմվ. 1933, էջ 199). շուրջ նոյն թուականին Պելճիոյ մէջ կը գտնենք Ս. Սերուատիոս
(Servatius = St Servais) հայ ազնուական մը, որ մտերմական յարաբերութիւններ ալ ունեցած է Ս. Աթանա-
սի հետ, մասնակից Սարգիսէի և Ռիմինի ժողովներուն, մաքառած Արիմոսութեան դէմ, եղած է եպիսկոպոս
Թոնկը (Tongres) քաղաքին և վախճանած 384 ին Maestricht ի մէջ՝ ուր փոխադրած էր իր աթոռը:

Կ'արժէ յիշել նաեւ Ս. Մակար հայկազն, ծն. Անտիոք, ուխտաւոր Երուսաղէմի մէջ 1011ին, որ յետոյ
Ֆլանտրայի կան քաղաքը զացած և վախճանած է 10 Ապրիլ 1012ին, իր կենսագիրներէն «ծաղիկ Հայաստանի»
կոչուած. (Հմմտ. Չամչեան, Պատմ. Հայոց. Բ. հտ. 858. — Աւգերեան. Լիակ. Վարք. Սրբ. հտ. ԺԲ. էջ 249-251):

Դարձեալ Միլանու մէջ ունինք հրաշագործ սուրբ մը՝ Ս. Արշակ հայկազն, որ նոյն քաղաքին հայրապետ
կ'ըլլայ 2. Դարուն: Ինչպէս կանխաւ նոյն քաղաքը պանդխտած և վախճանած հայ եպիսկոպոս մը՝ Աւրիգիոս,
373 ին: Ասոնց վրայ կարելի է աւելցնել Ս. Սիմէոն հայկազն հայ եպիսկոպոսը Ֆրանսայի մէջ 591 թուին՝ ինչ-
պէս կը յիշէ Tours ի պատմագիր Ս. եպիսկոպոսը՝ Ս. Գրիգոր, են:

3. Որու մասունքներն համբուրելու բախտ ունեցանք Աւելանէ վերջ (1850 ին) Մանտուա քաղաքի San Be-
nedetto Pò գիւղաքաղաքի 1500 հան շքեղ տաճարին մէջ, 1924 Սեպտ. 27 ին, երբ Միաբանութիւն իր խումբ
մը ներկայացուցիչ Հայրերու և աշակերտներու ձեռնով մասնակցեցաւ՝ հանդիսաւոր մեծ Ուխտագնացութեամբ մը՝
սուրբին մահուան կամ սրբացուցման 900 ամեայ տարեդարձին (տես Բզմվ. 1924 Հոկտ. էջ 313):

4. Acta Sanctorum Julii. հտ. 2. էջ 324-337, և Acta Sanctorum Ordinis Sancti Benedicti - Sex-
tum Saeculum ab Ordinis fundatione.

5. Տարեգրութիւնը (Annales) Գ. հտ.

Կղեմէս Կալանոս¹, Չամչեան², Աւգերեան³, Ագոնց⁴, Ալիշան⁵, և Սուրբին վերջին
կենսագիրը՝ Պերիկղէս քահանայ Աւտինի⁶ են:

Պարոնիոս յետ երկար պատմելու Ս. Սիմէոնի ուխտագնացութիւնն Հռոմի մէջ՝
սուղ ոճով մը կ'ըսէ թէ շրջեցաւ այցելելով Խտալիոյ, Գաղղիոյ և Սպանիոյ սրբա-
վայրերը: Աւգերեան ալ համառօտիւ կ'ըսէ. «Այլ ի փառաւորիլ իւրում՝ խոյս ետ ի
Հռովմայ... և գնացուցեալ զկաղս, որպէս յերթալն ի Սպանիա՝ երաց զաչս կուրի
միոյ և բժշկեաց զայսահար դուստր արքային» են:

Կ'արժէ սակայն հոս մէջ բերել Չամչեանէ՝ մեզի կարեւոր հատուածը, որ սուր-
բին հնագոյն կենսագրութենէն է՝ հրատարակուած Բուլանդեանց ձեռքով.

«Իսկ Սիմէոն շրջեալ այնուհետեւ (հարաւային Գաղղիոյ կողմերը) հետիոտս ի
բազում ուխտատեղիս՝ արար և զայլ բազում նշանս բժշկելով զկոյրս, գնացուցա-
նելով զկաղս են. որպէս է տեսանել ի վարս նորա:

Եւ ապա յուղի անկաւ դիմել ի Սպանիա. և ի ճանապարհի տեսեալ զկոյր ոմն
նստեալ առ ափն գետոյ՝ ասէ ցնա. Եղբայր, լուսացուր զձեռս մեր և զերեսս ջրով
գետոյս և ի միասին փութացուր երթալ տեսանել զպատարագ. զի հնչեցուցանեն
զզանգակ. և կոյրն անսացեալ նմա՝ լուսացաւ. և ապա մատեաւ երանելին և ինքնին
սրբեաց թաշկինակաւ զՆուրն յերեսաց կուրին. և նոյն ժամայն բացան աչք նորա,
և գնաց զհետ սրբոյն, և ոչ երբէք մեկնեցաւ ի նմանէ: Հասեալ սրբոյն ի Սպանիա՝
գնաց ի քաղաքն Կոմպոստելայ յուխտ Սրբոյն Յակոբայ առաքելոյ: Ազդ եղեւ թա-
գաւորի տեղւոյն համբաւ երանելոյն. և զի էր նորա դուստր մի այսահար, աղա-
չեաց զնա վասն նորա և սուրբն աղօթիւր եհան զդեմն: Եւ ի մատուցանել նմա
արքայի ինչս բազում՝ ոչինչ էառ ի նմանէ. և խոյս ետ անտի: Չկնի այսորիկ
գնացեալ ի Բրիտանիա, և յետոյ ի Գաղղիա, եկն ապա և զտեղի էառ յիտալիա ի
սահմանս քաղաքին Մանտուայո՝ որ և ասի Մանտովա, և բնակեցաւ ի մենարանի
միում կրօնաւորաց ի կարգէ սրբոյն Բենեդիկտոսի արքայի, ի վասն կոչեցեալ Պադո-
միում կրօնաւորաց ի կարգէ սրբոյն Բենեդիկտոսի արքայի, ի վասն կոչեցեալ Պադո-
միում են...: Սրար և ի քաղաքի անդ բազում հրաշս, որպէս գրեալ է ի վարս սրբոյն: Եւ
լիռան են...: Սրար և ի քաղաքի անդ բազում հրաշս, որպէս գրեալ է ի վարս սրբոյն: Եւ
զկնի այսր ամենայնի եհաս նմա հրաւէր կոչման ի Տեառնէ, և վախճանեալ փոխե-
ցաւ յամի Տեառն 1016 ի Յուլիսի 26, և թաղեցաւ ի նոյն վանս» են:

Ալիշան ալ յիշեալ գրաբար կենսագրութեան մէջ (Բզմվ. 1884) հոգեշունչ
կերպով կը նկարագրէ Ս. Սիմէոնի ուխտագնացութիւնը Առաքելոց շիրիմներուն՝ դէպի
Խտալիա և Սպանիա. «Ելցուր արդ զհետ Սրբոյն (Սիմէոնի)... նախ յալին տիեզերաց
դիմեալ և ի զուխ հաւատոց՝ ի մեծն Հռովմ, և անդ առաջի հայրապետին և ամե-
նայն եկեղեցւոյն վկայեալ ուղիղ դաւանութեան նորա և սրբութեան վարուց⁷, և
հրաւիրեալ ի յաջորդէն Պետրոսի կալ մնալ ի Հռովմ, խոյս տայր ի փառացն և եր-

1. Միաբանութիւն Հայոց սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի Ս. Եկեղեցւոյն Հռովմայ, Ա. հտ. — Conciliationis
Ecclesiae Armenae cum Romana etc. Ia pars, էջ 220-224, տպ. Հռոմ 1690. Կալանոս պարգապէս Պարո-
նիոսէ կ'առնէ Ս. Սիմէոնի վարքը:

2. Պատմ. Հայոց. հտ. Բ. Գրք Գ. էջ 860-866:

3. Լիակատար Վարք Սրբոց, հտ. ԺԲ. «Մնացորդ վարուց սրբոց արտաքոյ Տօնացուցին մերոյ, յիշատակե-
լոց ի Յայսմաւորս կամ ի Ճառքնորս Հայոց, որպէս և Յունաց և Լատինացոց», էջ 342-344, տպ. Վ. Ս. Ղ. 1815:

4. Սեփարհազար. Երոպա. Խտալիա «Մանտուա», էջ 497:

5. Բազմավէպ 1884, էջ 5-17 «Ս. Սիմէոն ճգնաւոր և սարկաւագ հայկազն», հանդերձ թարգմանութեամբ
Լատին տաղերու՝ Ս. Սիմէոնի նուիրում, Տե'ս նաեւ «Նուագը» Գ. հտ. «Առ Ս. Սիմէոն հայկազն յիզր Պադոմի»:

6. Vita di S. Simeone diacono ed eremita են. 1924. տպ. Mantova - Rovigo.

7. «Ի Լատերան, ուր ժողով առնէր Բենեդիկտոս Է (յամին 983), և զտանէր անդ եպս. մի հայ, որ խօսեալ
ընդ Սիմէոնի յերկար հայերէն, քննելով զուստն նորա և զորպէս, ծանուցանէ պապին զուղղափառ հաւատս նորա»:



նշխարք կայ: Եւ այլ շատ բազում և փառաւորութիւն կայ ի մէջ քաղաքին, Ո. 2. և Հ. Կ. եկեղեցի կայ ի Հոռոմ և ութհազար սրբոց գերեզման կայ ի քաղաքն և ի դրոց եւն. և յամէն օր հնգետասան եկեղեցի ի շուր կու գայի մեծ և փառաւոր եկեղեցիք և ամէն յօր ի գլխաւոր սուրբ առաքելոյն կերթայի և մեղաց թողութիւն խնդրէի. ով կարէ պատմել զփառաւորութիւն սուրբ եկեղեցեացն և երեք անգամ ի Փափան ի մօտ տարան զիս, և խիստ սէր և շաւղաթ արաւ ինձ և թուխտ երես ամենն կու գարմանային, որ կու տանէր և ի հետս կը զուրուցեր: Թ. Վ. Ջ. Խ. (= 1491) Յունիսի 9 ելաք ի Հոռոմայ և բազում աւուրք. 46 օրն հասար յաշխարհն դունդէլք ազգին որ են յԱլաման. և գնացար ի մեծն Կաստենձիայ⁷. և այլ բազում քաղաքաւ յեզրին գետովն գնացար ի մէջ քաղաքն Պազ⁸, որ և բռնեցին մեզ թէ դուք չաշուտ էք: Եւ այլ բազում քաղաքաւ գնացար ի Ֆրանկֆուրթ⁹ որ շատ հիանալի բան տեսար. և անտից բազում յաւուրք գնացար ի Ֆրիբուրգ¹⁰, որ ասացին թէ այս քաղաքիս Յոյսայի կայ և մեծ հարկեց հարկեցին զմեզ. և անտից ի Ստրազբուր¹¹ և անտից բազում քաղաքաւ բազում յաւուրք հասար ի Կալ¹² որ խիստ հարկեցին զմեզ: Եւ անտից բազում յաւուրս Բոն (Rhône) գետովն գնացար հասար ի մեծահամբաւ քաղաքն ի Կալոնիայ¹³. որ և ասացին թէ Մո և Իոյ տուն է. և խիստ մեծ և զարմանալի քաղաք է. և անդ էր մոզոց թագաւորաց գերեզմանն, և երեքին զլուխն ի վերայ գերեզմանաց դրած էր, և անդ էր երկոտասան հազար սրբոց նշխարքն, ամենուն մեծ եկեղեցին մէջն է շարած, ամէն մարդ կու տեսնու և մարմինքն գերեզմանած և եկեղեցի մի այլ կայ խիստ գեղեցիկ. քսանեւորս կուսանաց մարմինքն սնտկով զրած էր. և այն եկեղեցին ուր մոզոց թագաւորաց գերեզմանն է ի վեր քաշած է և դուռն է քաշածն և ըստ իւր և դէմ երեսին զուրբ Աստուածածինն նաւ պատի դուռն է քաշած

և ըստ իւր արժանեացն զարդարած և տէրն մեր Քրիստոս ի գիրկն, և մէկ թաճ մի դրած ի գլուխն անգին գոհար ակնեւորովն և մարգարտով զուգած էր որ զինչ կայ: Հարցար եկեղեցոյն իրիցներուն թէ զինչ կատարն ոչ լինի այս. ասացին թէ երկու հազար և հնգետասան հազարի ֆլորի է խարճեալ. և ի սիրտն սուրբ Աստուածածինին մարգարտէ խնձոր մի կապած քանի փրով փրով ընկուզի մի է և ի բոլորն Թ. հատ մարգարիտ, ամէն հատն քան ի զլթոր մի է, և մէջ ընդ մէջ, չորս ակն, երկու լալ, երկու եաղուտ. ամէն մէկ քան ի մեծ զըթոր մի է. և յաւագ խորանին բոլորն յիսունեւեկեց դեղին պղինձէ գերեզման ի վեր քաշած և վեց գերեզման դեղին պղինձէ գերեզման ի վեր քաշած. եկեղեցին հինգհարկուր կամարի վրայ էր բարձր և ահեղ. և զինչ յաւր. յաշխարհս բան կայ զամէնն ի դրոց ի դինն նաւպաթ էր կաւած. երեքհարկուր եօթանասունեւհինգ լուսանայմուտներ, և ամէն լուսնայմուտի երկանք երեք գիրկ. և եկեղեցուն լուսայմուտերն ամենն գունս ի գունոց ճամով զարդարած. և զանկակուրճն (զանգակատուն) քան ի բերթ մի մեծ է, և ահեղ զանկակ մի ի կախ, որ ԻՆ հոգի կու քաշէ: Եւ այլ բազում եկեղեցիք և վանորայք շատ կայ որ չկարացի կամ զքաղաքն կամ զեկեղեցուն պատմութիւն զգիրն զայն [զր]ել. և կեցար յայնմ քաղաքն քսանեւերկու յաւր և խիստ հարկեցին զմեզ, մեղաց թողութիւն խնդրեցար և ապա յեւաք ի մեծէն Կալաւանիու, հոկտեմբերի քսանեւհինգ:

Եւ բազում քաղաքաւ հասար ի թագաւորաց գերեզմանատունն քաղաքն որ է Ալաման ազգին: Եւ անտից բազում յաւուրս հասար ի քաղաքն Սանդամարիայ տ'Աքս¹⁴ ուր ամենաւրհնեալ և փառաւորեալ շապիքն է սուրբ Աստուածածինին. խիստք զարմանալի շէնք է. ամէն ոսկով զուգած և չորս դեղին պղինձէ սիւն է կանկնեցուցած եկեղեցի մէջն տեղն է և մեծ մեծ դեղին սիւն զլուխներն ոսկով զուգած և մեծ յոսկէ զաւօքսն սնտուկ մի մարգարտաշէն և սուրբ Աստուածամօր ամենօրհն

նեալ սուրբ շապիկն է ի ներս. և կեցար անդ Ժ. յօր, մինչ բացին որ արժանի եղար մեզ և մեր ծնողացն և երախտաւորացն. և զասասաց վարդապետ կային խիստ մեծ հարկօք պատուեցին զմեզ և մեծարեցին: Եւ անտից ելեալ գնացար բազում աւուրք բազում քաղաքաւ հասար ի մեծն Յունիէս¹⁵ ուր թագաւորանիստ է յԱլամանաց և կեցար անդ մետասան յօր. և անդ է Քրիստոսի ուր ամենազօր սուրբ թագաւորին տեսն մեր Յիսուսի Քրիստոսի սուրբ ֆութան որ ի ժամ խաչելութեանն կապեցին Քրիստոսի աստուածընկալ աւրեամբն ներկեալ էր և արժանացար սուրբ տեսոյ նորա և մեղաց թողութիւն խնդրեցար մեզ և մեր ծնողացն և երախտաւորացն: Եւ անտի ելաք բազում յաւուրք յաշխարհութեամբ բազում քաղաքաւ հասար յաշխարհն Ֆրանտիու¹⁶ և լեզու չգիտէար զրուցելու, խիստ դժարութեամբ յեւաք անտից: Եւ բազում աւուրք հասար յաշխարհն Բնիլլաւ¹⁷ և զնոցա լեզուն այլ չիգիտէար, նորա այլ ձկնակերք էին զինչ մեծ և ահեղ ձուկն կայ յայն ծովէ որ է համատարած ծովուն յեզրն յարեւմուտս կոյս. և եկեալ հասար բազում յաւուրք յաշխարհն Ֆրանցաւ¹⁸ զայն ի քաղաքն սան Տօնիթ¹⁹. և այն քաղաքն եւ պիսկոպոսաց և թագաւորաց և թագոհոց գերեզմանատուն է խիստ գեղեցիկ և փառաւորեալ քաղաք է և շատ եկեղեցի կայ. և յաւագ եկեղեցին ուր թագաւորաց գերեզման է յեկեղեցուն ձախ թիհն չորս կող էր դրած ձկան, ամէն կող հինգ գիրկ և երեք թիզ չափեցին և ասացին թէ այս ծովս կայ ֆիթիարի ձուկն, և կեցար յօր մի: Եւ ելեալ յանտի հասար ի մեծահամբաւ քաղաքն ի Բարիզ դեկտեմբերի Թ. և մտեալ ի քաղաքն Կէսյաւուրն և իրիկուն գնացար ի սպիտալ մի հանաք. և մէկայլ օրն յետի ժամուն հասար յաւագ եկեղեցին մեծ և գեղեցիկ և զարմանալի եկեղեցին մեծ և գեղեցիկ և կարէ պատմել. և որ մարդ լեզուով չի կարէ պատմել. և յաւագ եկեղեցին ունի երեք մեծ դուռն յարեւմտից դինն և ի միջի դրանն երկու փեղկին մէջն Քրիստոս է կանգնել և ի

վերեւ դրանն՝ Քրիստոսի դատաստանն է նստել յոսկի աթոռով և ամէն յոսկի վարադով զարդարած է. և երկու հրեշտակ յաջ և ի ձախ կանգնել են և յաջ դինն հրեշտակ բռնել է զայն սիւնն որ Քրիստոս կապեցին և զգեղարդն որ Քրիստոս ի կողն խոցեցին և ի ձախ դինն հրեշտակ կանգնեալ է, և զսուրբ խաչն է բռնել և ի յաջ դինն սուրբ Աստուածածին է չօքել ի վրայ ծնկացն և ի ձախն Ս. Յովանէս և Ս. Ստեփանոս և յառջեւն հրեշտակ հրեշտակապետք և ամենայն սուրբք. և մէկ հրեշտակին ձեռքն կշիռք որ զմեղքն և զվարճքն կու կշեռէն զմարդուն. և ի ձախ դինն քիչ մի վայր սատանայ և դեքն ամենայն հետ իւր և զմեղաւոր մարդիկն զընծիլէին. և ի դժոխդ հանած է զարհուրելի դիմօք որ մարդ ի աշուն կը սասանի և կու սոսկայ. և դէմ Քրիստոսի սուրբ յառաքեալքն և մարգարէքն և սուրբ հայրապետք և զանայն սուրբ ազգի յազգի գունով զարդարած և ոսկով շինած է զարքայութիւն, որ մարդ ի տեսնուն կը փառաւորի. և այլ ի վեր հանած է քսանեւութ թագաւորն թաճն ի գլուխներ և կանգնել են մարդու պէս ի բոլորին. և այլ ի վեր զՏիրամայր սուրբ Աստուածածինն ոսկով զարդարած գունս ի գունոց, որ կանգնել են յաջ և ի ձախ սուրբ հրեշտակապետք ի սպասաւորութիւն. և եկեղեցուն լուսամուտերն բոլոր ամէն մէկ քան ի կալ մի: Եւ եկեղեցին ուր կու մտեն ի ձախ դինն հանած է անտաշ վէմ մի մեծ զսուրբ Քրիստոսի փորն և զՔրիստոս ի յուսն, և ի վայր զնահատակութիւն սուրբ Քրիստափորին և որ յաւագ խորանին փոլորն զբոլոր Քրիստոսի սուրբ տնօրինականքն. և բազում զարդարանք կայ որ մարդ երբ կարէ լեզուով պատմել քաղաքին աղէկու թիւնն և քաղաքն խիստ մեծ և զարմանալի քաղաք է և երկու գետ կու մտանէ ի մէջն, և կէսն ի դուրս չէ ելնել. և զքաղաքին մեծութիւնն ով կարէ պատմել. և կեցայ ի Փարիզ երեքտասան յօր: Եւ անտից մէկ ընկեր այլ մարդ եղաւ մինչեւ ի յՍտըմպօլ քաղաք. և քնացի միայն զա-

ւորս ԹԶ: Եւ հասեալ ի Տուրքուրան²⁰ քաղաք բազում յաշխատութեամբ. և անտի գտի ֆռանկ սարկաւագ միր և ընկեր եղեւ մինչեւ ի կաստիլար²¹ քաղաք. և անտից ի մեծն փոթեր²² քաղաք. և անտի էր Գրիստոսի պատանքն որ արժանի եղաք տեսաւ ներոյ, և այլ ընկեր չգտայ և մնացի միայն: Եւ ապաւինեալ ի սուրբ Յակոբու սուրբ աղօթն և ամենակարողն Աստուած. և յեւելեալ բազում յաշխատութեամբ հետիոտն դիմել ելեալ գնացի բազում քաղաքաւ, ի հասաւ ի կասնկոնիայ²³. և անտի ի կաստիլայ²⁴, և անտի Ապոզոնիայ²⁵. և անտից բազում աշխատութեամբ միայնակ զԱստուած յունէի յօգնական: Եւ եկեալ հասի յաշխարհն Պալոնայ²⁶ որ և քրիստոնեայն մեծ սիրով ընդունեցան և հարկեցին զչափն ի վեր. և կեցաք վեց յօր և ընկեր չգտայ ապաւինեալ Աստուած և ի սուրբ Յակոբ. և յեւելալ դիմեցին բազում յաւուրս աշխատութեամբ յաշխարհն Պիսկային²⁷ որ է ձկնակերաց յաշխարհն, Պիսկայ քաղաք յեզր ծովուն: Եւ անտից Սան Սերաստիան²⁸ որ սպիտալին տիրն այրն և կինն խիստ անչափ սէր արարին և պահեցին զիս հինգ յօր յայն քաղաքն, և երկու երեք անգամ ժողովք արին ինձ. և այն քաղաքին սիրուն մարդ չիտեսայ: Եւ անտից ի ծովուն յափն ի ներս գնացի բազում յաւուրք և ընդ որ գնացի խիստ հարկեցին հինգ վեց քաղաք. և անցեալ գնացի բազում յաւուրք և հասայ ի մեծն փոթեր²⁹ և կեցայ չորս յօր. և ելեալ միայն և հասայ Խանթանտէր³⁰: Եւ անտից Սանթեւանայ³¹ և անտից Սանմիսան³² եզր ծովուն և շատ սէր արարին ինձ. և ելեալ անտից և եկի ի Սան Սալվաթոր³³ և անտից ի Պետանց³⁴ քաղաքն. և անտից բազում յաշխատանք զԱստուած ունէի յօգնական յոյժ աշխատեալ և նուազեալ հասայ ամենօրհնեալ և փառաւորեալ և տիեզերաւոյս տաճարն և ի գերեզման սուրբ Յակոբայ, ուր սուրբ մարմին է ի քաղաքն կալիցայ³⁵: Եւ գնացեալ մտի ի գերեզմանն անկեալ ի վերայ երեսաց իմոց երկիր պագեցի և մեղաց թողութիւն խնդրեցի

ինձ և ծնողացն և երախտաւորացն և բազում արտասօք զփափաք արտիս իմոյ կատարեցի. որ է եղեալ ի մէջ սուրբ սեղանին դեղին պղնձէ տապանին, և երեք կուղպարով փակած, և զինքն մարդապէս շինած է ի վերեւ սուրբ սեղանին, որ նստել է աթոռով և թագ ի գլուխն. և ի վրան փայտէ գումպեթով կապած. և եկեղեցի խաչանման է մեծ և փառաւոր գումպեթով, և երկու դեհն զանկակաւորհներ և եկեղեցին երեք տապաղայն է մէկ կամարի վրայ է, և չորս դուռն ունի. հարաւայ դիհի դուռն ի դուրս կենեա, մեծ շատրաւան մի կայ և սպիտակ փողխողներով նստել է և իւր նշաններն և հլուններն զինչ որ բնդոնն ի հոն կու ծախուի: Եւ յաւուրմոց դրանն յառջեւն ի ցած ալուի աղբիւր կայ. և յարեւելից դրանն ի վեր և Գրիստոս է նստեալ յաթոռով յԱղամայ մինչեւ ի կատարած աշխարհի զինչ եղեր է և զինչ որ լինելոց է զամեն նշանած է: Եւ զայլ անբաւ վայելչութիւն, ո՞վ կարէ պատմել:

Եւ կեցայ ԶԻ (= 84) յօր. այլ չի կարացի կենալ, թանկութիւն էր. և ի մեղաց թողութիւն խնդրեցի և իմ ծնողաց և ամենայն երախտաւորաց իմոց: Եւ ուր մարմինն էր սուրբ, հաստ երկաթով փանձարայած է, և այլ շատ փառաւորութիւն կայ սուրբ Յակոբայ, բայց չի կարացի գրով արկանել: Առի գորհնութիւն սուրբ Յակոբայ և ելեալ դիմեցի յեզր աշխարհի յեզր Աստուածածինն որ սուրբ Պողոս յառաքեալն իւր սուրբ ձեռքն շինել, որ Ֆրանկներէն ասեն՝ Սանթայ Մարիայ Ֆենէս տիւնայ³⁶. բազում աշխատութեամբ և բազում վիշտ քաջեալ ի ճանապարհին և հանդիպեալ բազում վնասակար գազանաց, և հանդիպեցաք վաքներին? մեծ և վնասակար գազանին, որ և ասացին թէ 20 հոգի եարախով չի կարել անցնել, դու ինչպէս ազատեցար: Եւ եկեալ հասի յաշխարհն Հոլանի³⁷ որ և նոքա այլ ձկնակերք են և նոքա լեզուն չգիտէաք. բայց խիստ կու հարկէին զմեզ և տնէ ի տուն կու տանէին և կու զարմանային թէ ոնց

ազատեցար ի վանքներէն. և եկի բազում քաղաքաւ ընդ եզրեր համատարած ծովն և լեզու բնաւ չի հասկանալ. բայց Բարէն թխտովն կու հարկէին: Եւ ելաք ի քաղաք մի որ մեծ գետ կու գայր յեզրն ի վայր. 68 ակն կամուրջ էր կապած. և յանցեալ հասած մեծ վիլվալ³⁸ և կեցայ անդ 3 յաւր: Եւ ելեալ յանտի գնացի քսանեւթոն յօր և հասա ամենօրհնեալ քաղաքն ի Կեթարիայ³⁹. որ և մեծ հարկօք պատուեցին զմեզ. և կեցայ անդ եօթն յօր և գտեալ մեծ նաւ մի որ ասացին թէ ութսունհազար զանդար բեռն ունիմ, և աղաչեցի զիրեցանին թէ ասէք որ զիս այլ ի նաւն առնուն, այլ չեմ կարել քալել, անձինս տազարթն հատաւ: Եւ նոքա կու զարմանային թէ զայս աշխարհս դու ոնց կացիր հետեւակ քալել. և գնացին գնաւ տէրն աղաչեցին մեզ. Այս հայ կարգաւորն ի նաւդ առէք, հետու յաշխարհէ եկեալ է և չի կարել ցամաքով ի յետ դառնայ: Կարդացին զՊապին թուխտն, որ լսեց և ասաց թէ կառնում ի նաւս, և ապա ասացէք դորայ որ գիտենայ որ ես համատարած ծովով կ'երթամ. իմ նաւս պազիրկեան չի մտներ. այս կատար մարդս որ կայ նաւիս ծառութիւնք են. մենք զմեր արեւուն թարկն տվեր ենք և Աստուած ապաւինեք. թէ նասիպս բերէ որ Աստուած ազատէ զմեզ որ բողոքենք զաշխարհսն՝ այլաւ?, և թէ չէ՝ նայ զայն Աստուած գիտէ. այլ ի հով ճար չունիմք գնալու, թէ դու այլ կամք ունիս՝ խիստ բարի. արեւի ի նաւս գհացդ ու զկերդ ու զխում մի հոգալ. բո վարձքն այլ քեզ: Այն կարգաւորն թէ մեք այլ հոգի ունինք զդորայւորքն՝ թէ մեք այլ հոգի ունինք զդորայւորքն. և զինչ որ Աստուած պապաքսիմատն. և զինչ որ Աստուած պատրաստեալ է՝ մենք կու հոգանք: Դարձան ի քաղաքն և ժամուն ատեն հասկացուցին ժողովրդեանն թէ այս հայ կարգացի ի նաւ կու մտէ. ձեր տղայոց աւուրս ի նաւ կու մտէ. ձեր հոգուտ իրենս ազիր բեռուն համար և ձեր հոգուտ իրենս ազիր ժողովեցէք: Անչափ բարի բերին որ քանի շատ ուտէին չէր հատնիր: Եւ մտաք ի նաւն նոր կիրակին երեքշաբթի օրն և վաթսունեութ օր զաշխարհ բողոքե-

ցաք և եկաք եզր աշխարհի քաղաքն յԱնդալուզիայ⁴⁰, եկաք ի ան քաղաքն որ ի մէջ ծովուն էր և կեցաք ի յան քաղաքն իննեւտան յօր. զի մեծ ալեկոծութեան հասաք ու հանդիպեցաք, և կասարքն պատուեցաք, եկին այն տեղն շինեցին և ինքն խիստ գեղեցիկ քաղաք էր փոքրիկ և փառով ելին: Եւ այս տեղացս բաժանեցայ և գնացի ի Սանթամարիա կատալոն⁴¹. և անտից ի Սպիլիայ⁴², որ զխաթունն տեսայ և յետ դարձայ:

Եւ ելեալ յանտից նաւովս և ութեւտան յօրն եկեալ հասանք յաշխարհն Մադրիպացոց, զի քամին ի դէմ էր և ֆուրթունայ էր. եկեալ ելան ի Սալաւպրունայ⁴³. և ես այլ ի նաւ չիմտայ. ելայ կեցայ երեք օր և ելեալ միայն միայնակ ի Մադրիպացոց մէջն ի ներս մեծ մի լեռ յանցայ որ երկու յօր ի կէսն եկի. և եկի ի Մադրիպացոց թախտն ի Կրիտան⁴⁴ օր խաթուն էր առել մեծ և բարելի քաղաքն, և կեցայ մետասան օր, և ելեալ հինգ աւրն եկի ի մեծն Աճայէն⁴⁵ որ անդ էր մէկ դաստառակն Գրիստոսի. և եկեալ անտից ի Սպալիսայ⁴⁶. և անտից յՈւլվիթայ⁴⁷ և յանտից ի Սանրստեֆան⁴⁸. և յանտից ի Պուրդուս⁴⁹. ասինչ ի Չնչիլայ⁵⁰ որ և ներք սեւ ցաւ եղայ և կեցայ հինգ յօր որ պարոնն հոգմն արաւ հաքիմն որ քիչ մի լաւցայ. և յանտից Սմանց⁵¹, և անտից ի Պալատէզ⁵², և ի Մուլթն⁵³ և անտի ի մեծն Սանդիլայ⁵⁴ որ էր քսանեւհինգ հազար տուն. և անդ կրկին հիւանդութիւն քաշեցի փորցաւ եղաւ, և այն կարգաւորքն մեծ սիրով ընդունեցան և ինձ ծառայութիւն արին մինչեւ որ առողջացայ. և ելեալ գնացի զիրար և անտից հնգետասան յօր հասայ ի մեծն Վաենցիայ⁵⁵ որ էր եօթանասուն հազար տուն, և կեցայ չորս օր. և յանտի գնացի ԻՍ աւրն ի մեծ քաղաքն Պարսալոն որ է իննսուն հազար տուն, և կեցայ վեց օր և անտից ի Բրբընիայն⁵⁶, և յանցեալ յաշխարհ կաղալին և գնացի զաւուրս ԼԳ և հասի յաշխարհն Յիցիլային⁵⁷. և անցեալ բազում քաղաքաւ յաշխարհն Պաւնցօղաց զաւուրք բազումք յանցայ

